

# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## ԾԱՆՈՒՑՈՒՄ



*Մայր Աթոռի Դիվանը այսու լիազորված է հայտնելու, թե Վեհափառ Հայրապետի վերջին ուղևորության ընթացքում, հուլիսի 22—30 օրերին, կորել է Նորին Ս. Օծության հայրապետական մետաղյա կնիքը, որի նմուշը հրատարակվում է առընթեր։*

*Սույն կնիքը այսուհետև համարվում է անվավեր։*

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

25 օգոստոս 1967

*
* *

Օգոստոսի 13-ին՝ կիրակի.—Վերափոխումըն սուրբ Աստուածածնի։

*Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում պատարագեց լուսարարապետ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը։*

*Ս. պատարագին ներկա էին բազմաթիվ ուխտավորներ և սփյուռքի զանազան կողմերից եկած ուսուցիչներ։*

*Հավարտ ս. պատարագի տեղի ունեցավ «Կարգ խաղող օրհնելոյ»։*

*
* *

Օգոստոսի 14-ին՝ երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց։

*Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ տ. Հակոբ քհն. Հակոբյանը։*

*Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ «Վասն համօրէն ննջեցելոց»։*

*
* *

Օգոստոսի 20-ին՝ կիրակի.—Երկրորդ կիրակի զկնի Վերափոխման։

*Հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը պատարագեց Մայր տաճարում։*

*Ս. պատարագին ներկա էին ֆրանսահայ բազմաթիվ ուխտավորներ։*

*Ավելի ուշ Մայր տաճար այցելեցին Ֆրանսիայի, Բելգիայի տարբեր դավանությանց մի խումբ հոգևորականներ, որոնք վերջում ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից։*

*
* *

Օգոստոսի 24-ին՝ հինգշաբթի.—*Երեկոյան ժամը 6-ին, վեհարանում, տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ընդլայնված նիստը, որտեղ Վեհափառ Հայրապետը շուրջ երկու ժամ խոսեց հուլիսի 10—13 օրերին Ժնևում Եկեղեցիների համաշխարհային խոր-*

հրդի և ապա հուլիսի 19—20 օրերին՝ Ժնևում Համայնքի տված Իր այցելության ազգային-եկեղեցական արդյունքների մասին։

Նիստին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, մայրավանքի ղեկավար աշխատողները, Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, Վերստուգիչ հանձնաժողովի և Արարատյան թեմի թեմական խորհրդի անդամները։

Մայր տաճար այցելեց ֆրանսահայ երկրորդ ուխտավորների խումբը։

Վեհափառ Հայրապետը, վեհարանում, ընդունեց նրանց։

*
* *

Օգոստոսի 25-ին՝ ուրբաթ.—*Երեկոյան ժամը 6-ին, վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը։*

*
* *

Օգոստոսի 27-ին՝ կիրակի.—Տոն գյուտի գոտւոյ սրբուհւոյ Աստուածածնի։

*Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը։*

*Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*

*Երեկոյան ժամը 6-ին Մայր Աթոռ ժամանեց հոգ. տ. Մամբրե վրդ. Մարգարյանը։*

*
* *

Օգոստոսի 31-ին՝ հինգշաբթի.—*Այսօր ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը վեհարանում ընդունեց այցելությամբ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Լիբանանից, Կիպրոսից, Եթովպիայից եկած և ուխտավորաբար մայր հայրենիքում գտնվող շուրջ 30 հայ ուսուցիչ-ուսուցչուհիների խմբի։*

*Ն. Ս. Օծությունը մտերմիկ զրույցի ժամանակ հետաքրքրվեց սփյուռքահայ ուսուցիչների կյանքով և գործունեությամբ և ապա օրհնելով նրանց կրթանվեր ջանքերը, հաջողության մաղթեց նրանց։*

*Այցելության ժամանակ ուսուցիչների խումբը հյուրասիրվեց Մայր Աթոռի բարիքներով՝ խաղողով ու դեղձով։*

*Ավելի ուշ Վեհափառ Հայրապետը ընդունեց Բեյրութից ժամանած մի խումբ ուխտավորների այցելությունը։*

*
* *

Սեպտեմբերի 3-ին՝ կիրակի.—*Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ տ. Հակոբ քհն. Հակոբյանը։*

*Ս. պատարագին ներկա էին շուրջ 30 ուխտավորներ, որոնք ընդունվեցին վեհարանում Վեհափառ Հայրապետի կողմից։*

*
* *

Սեպտեմբերի 10-ին՝ կիրակի.—Բարեկենդան ս. խաչի պահոց։

*Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ տ. Հովհաննես քհն. Մարուքյանը։*

*Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը, ինչպես նաև ամերիկահայ ուխտավորներ։*

*Ժամը 2-ին Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելությունը՝ հյուրախաղերով մայր հայրենիքում գտնվող, Մետրոպոլիտենի հանրածանոթ երգչուհի Լիլի Չուքասյանի։*

*
* *

Սեպտեմբերի 17-ին՝ կիրակի.—Խաչվերաց։

*Օրվա մեծ տոնի առթիվ Մայր տաճարում պատարագեց գեր. տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը։*

*Ս. պատարագին ներկա էին՝ Վեհափառ Հայրապետը և ուխտավորների մեծ խումբ։*

*Երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Մայր տաճարում և վանքի շրջափակում խաչվերացի ավանդական թափորը։*

*
* *

Սեպտեմբերի 18-ին՝ երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց։

*Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ տ. Նշան քհն. Բեյլերյանը։*

*Հավարտ ս. պատարագի տեղի ունեցավ հոգեհանգիստ՝ «Վասն համօրէն ննջեցելոց»։*